ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Տարեկան զեկույց
Հայաստան 2016

Տարեկան զեկույց. ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում, 2016թ.

Կազմվել է Հայաստանում Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ-ի կողմից՝ ԻԼԳԱ-Եվրոպայի աջակցությամբ (հունիս, 2017թ.)

Շապիկի լուսանկարները՝ Նարեկ Ալեքսանյանի / Hetq.am,
«Ես քո վրա, դու իմ վրա» պարային ներկայացում

Ներածություն

2016թ. սկսվեց ԼԳԲՏ ակտիվիստների ծեծով, սակայն իրավախախտներն այդպես էլ չբացահայտվեցին և մեղավորները պատասխանատվության չենթարկվեցին:

Թեև տարվա ընթացքում նկատելի էին շոշափելի դրական փոփոխություններ, սակայն պետական մակարդակում կրկին որևէ քայլ չի ձեռնարկվել, որպեսզի ԼԳԲՏ մարդիկ իրենց պաշտպանված զգան:

2016թ. դրական իրադարձություններից էր տրանսգենդեր անձանց շահերի պաշտպանությամբ զբաղվող «Իրավունքի կողմ» կազմակերպության բացումը, «Լսիր ինձ. չպատմված պատմություններ ատելությունից անդին» վավերագրական ֆիլմի թողարկումը, որտեղ

ԼԳԲՏ տասը անձինք բաց դեմքով խոսել են իրենց մասին: Դրական էր նաև 2016թ. ընթացքում առցանց լրատվամիջոցների արձագանքը ԼԳԲՏ խնդիրներին: Տարվա ընթացքում մի շարք լրատվամիջոցներ համագործակցել են ԼԳԲՏ անձանց և իրավապաշտպան կազմակերպությունների հետ՝ իրենց նյութերը պատշաճ ներկայացնելու համար:

Այդուհանդերձ Հայաստանի բնակչությունը դեռևս չափազանց բացասական վերաբերմունք ունի ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ: 2016թ. «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի (Փինք Արմենիա) և «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի» իրականացրած հետազոտությունը ցույց է տվել, որ Հայաստանի բնակչության 86.6%-ը ցանկանում է, որպեսզի օրենքով արգելվի նույնասեռականությունը: Ուսումնասիրության արդյունքում նաև պարզվել է, որ ԼԳԲՏ անձանց նկատմամբ բացասական վերաբերմունք ունեցող անձանց շրջապատում ԼԳԲՏ անձինք չկան, իսկ ԼԳԲՏ ծանոթներ ունեցողները ավելի բարյացկամ են[1]:

2016թ. Փինք Արմենիայի և «Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոնի կողմից իրականացված մեկ այլ՝ «ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործություններն ու ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում»[2] ուսումնասիրության համաձայն, հարցված 198 ԼԳԲՏ անձանցից 79,7%-ը 2010-2016թթ. ժամանակահատվածում ատելության հիմքով հանցագործության զոհ է եղել, իսկ 20,3%-ը՝ ատելության հիմքով հանցագործության ականատես: Այս զեկույցի վերջում տեղ են գտել ատելության հիմքով հանցագործությունների ուսումնասիրությունից բխած առաջարկություններ ևս:

Տարվա ընթացքում Փինք Արմենիայում ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտման 27 դեպք է գրանցվել: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ դիմել է 4 ԼԳԲՏ անձ, որոնցից մեկը՝ գրավոր, 3-ը՝ հեռախոսազանգի միջոցով: Սա վկայում է այն մասին, որ չնայած առկա խնդիրներին, ԼԳԲՏ անձինք իրենց խախտված իրավունքների պաշտ-

[1] «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ (Փինք Արմենիա) և «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն» (ՀՌԿԿ). «Նախապաշարումներից հավասարություն: Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն». Երևան (2016թ.)

[2] «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ (Փինք Արմենիա) և «Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոն. «ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործություններն ու ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում. Տեսությունից իրականություն». Երևան (2016թ.)

պանության համար նախընտրում են չդիմել պետական մարմիններին, այդ թվում՝ ՄԻՊ-ին, փոխարենը օգտվում են ՀԿ-ներում տրամադրվող աջակցությունից:

2016թ. Փինք Արմենիան արձանագրել է կյանքի իրավունքի խախտման դեպքեր, խոշտանգումներից կամ անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտման դեպքեր, խտրականությունից և ատելություն սերմանող խոսքից զերծ մնալու իրավունքի խախտման դեպքեր, մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի խախտման դեպքեր, օրենքի առջև հավասարության և հավասար պաշտպանվածության իրավունքի խախտման դեպքեր:

Այս զեկույցն ամփոփում է Փինք Արմենիայի կողմից 2016թ. արձանագրած և փաստաթղթավորած դեպքերը, ԼԳԲՏ անձանց հետ անցկացված հարցազրույցների արձանագրությունները, դատական գործերի, համացանցում և ՁԼՄ-ներում տեղ գտած հրապարակումները:

ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարումը զեկույցում ներկայացված է հետևյալ կառուցվածքով.

1. Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ազգային և միջազգային օրենսդրության այն հիմնական դրույթները, որոնք խախտվել կամ սահմանափակվել են արձանագրված դեպքերում:
2. Կոնկրետ իրավունքների ոտնահարումների արձանագրված դեպքերի ընդհանուր նկարագրությունը:

Զեկույցի վերջում զետեղված են Փինք Արմենիայի առաջարկությունները պետական մարմիններին, ՁԼՄ-ներին, միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին, որոնց իրականացումը հնարավորություն կտա ապահով միջավայր ստեղծել հասարակության մեջ ԼԳԲՏ անձանց համար, որտեղ նրանք հանդես կգան որպես հասարակության լիիրավ անդամներ և հնարավորություն կունենան արդյունավետ իրացնել իրենց իրավունքներն և ազատությունները:

Օիածան ֆորում, 2016թ.

1. ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքները հարգելու և պաշտպանելու պետության պարտավորությունը

1.1. Կյանքի իրավունք

1. *Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:*
2. *Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից:*
3. *Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:*

Հոդված 24, ՀՀ Սահմանադրություն [3]

Անձի կյանքի իրավունքի իրականացումն ապահովելու պետության պարտականությունը ոչ միայն ենթադրում է ուղղակիորեն չմիջամտել դրա իրականացմանը, այլև պաշտպանել մասնավոր անձանց կողմից ոտնձգություններից[4]: Այսինքն, պետության ուղղակի պատասխանատվության բացակայությունը անձի կյանքի իրավունքի միջամտության գործում չի բացառում վերջինիս պատասխանատվությունն իրավունքի խախտման հարցում[5]: Այնուամենայնիվ, կյանքի իրավունքը պետք է մեկնաբանվի այնպես, որպեսզի անհամաչափ ծանր բեռ չդրվի իշխանությունների վրա: Երրորդ անձանց կողմից ոտնձգությունների դեպքում կյանքի իրավունքի խախտում կարող է արձանագրվել այն դեպքում, երբ հաստատվի, որ պետությունը իմացել է կամ պարտավոր է իմանալ տվյալ պահին երրորդ անձանց կողմից անձի կյանքին սպառնացող իրական և անմիջական վտանգի առկայության մասին և իր լիազորությունների շրջանակներում չի ձեռնարկել անհրաժեշտ ողջամիտ միջոցներ կանխելու անձի կյանքին սպառնացող այդ վտանգը[6]:

Կյանքին և առողջությանը վնաս հասցնելու և այլ սպառնալիքներ

Փինք Արմենիայի ֆեյսբուքի էջին Դավիթ Մալայան անունով օգտատերը հայհոյանք պարունակող գրառում էր թողել՝ նույնասեռականներին Հայաստանից «վերացնելու» գործունեությունը շարունակելու սպառնալիքով:

Մասնավորապես նա գրել էր. «... լավ ենք անում քրֆում ենք, լավ ենք անում ծեծում ենք ու իլը լավ էլ անելու ենք մինչև որ չվերանաք էս երկրից: ... զգուշ եղեք, դուք ապրում եք հայ ազգի մեջ ու ամեն վայրկյան ձեր կյանքին վտանգ ա սպառնում...»:

Հանցագործության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազություն հաղորդում էր ներկայացվել: Դեպքի վերաբերյալ նյութերի նախապատրաստման ընթացքում Դավիթ Մալայանը հետաքննության մարմնին հայտնել է, որ ինքն է տեղադրել այդ գրառումը, սակայն որևէ մեկին սպառնալու նպատակ չի ունեցել, պարզապես արտահատել է իր վրդովմունքը նույնասեռականների նկատմամբ: Ի վերջո, գործ չհարուցվեց:

Փինք Արմենիայում գրանցված դեպքի համաձայն, նույնասեռական տղամարդը դիմել էր կազմակերպություն՝ ասելով, որ ծանոթը, չարաշահելով վստահությունը, վերցրել է նրա համակարգիչը՝ խոստանալով վերադարձնել: Այնուհետև հեռախոսային նամակագրության միջոցով սպառնացել է, որ եթե համակարգչի հափշտակման մասին հայտնի ոստիկանությանը, նա կբացահայտի տղամարդու սեռական կողմնորոշումը:

Փինք Արմենիայում գրանցված մեկ այլ դեպքի համաձայն, անձը դիմել էր կազմակերպություն՝ հայտնելով, որ ինչ-որ մեկն, իմանալով իր ընկերոջ սեռական կողմնորոշման մասին, հեռախոսային նամակագրության միջոցով սպառնալիքներ է հնչեցրել:

---

[3] Հոդված 24, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ.
[4] Անգելովան և Իլիեվն ընդդեմ Բուլղարիայի Թիվ 55523/00 ՄԻԵԴ վճիռ, §93
[5] Եվրոպայի Խորհրդի CM/Rec(2010)5 «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ պայքարի միջոցների վերաբերյալ» հանձնարարական
[6] Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության ԹԻՎ 23452/94 ՄԻԵԴ վճիռ

Կազմակերպությունում դեպք է գրանցվել, երբ անչափահաս տղայի հեռախոսը դասընկերները վերցրել են, կարդացել այնտեղ առկա նամակագրությունները և, հասկանալով, որ տղան նույնասեռական է, շանտաժի են ենթարկել: Մասնավորապես, պահանջել են գումար՝ նրա սեռական կողմնորոշումը չբացահայտելու դիմաց:

2016թ. կազմակերպությունն արձանագրել է կամ արձանագրվել է ԼԳԲՏ անձանց նկատմամբ սպառնալիքի չորս դեպք, որից երեքի հիմքում ընկած է սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության (ՍԿԳԻ)՝ այլոց բացահայտման գործոնը:

ԼԳԲՏ համայնքի նկատմամբ հասարակության խիստ բացասական վերաբերմունքի հետևանք է այն, որ բազմաթիվ նույնասեռականներ ամոթից կամ վախից դրդված թաքցնում են իրենց սեռական կողմնորոշումը: Սա դաշտ է ստեղծում, որպեսզի այլոք, իմանալով անձանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին, օգտվեն վերջիններիս խոցելիությունից ու, սպառնալով բացահայտել նրանց ինքնությունը, չարաշահեն այդ մարդկանց: Հասարակական կարծիքի փոփոխությունը առանցքային նշանակություն ունի այսպիսի հանցագործությունները կանխելու գործում:

1.2 Խոշտանգումներից կամ անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք

1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

2. Մարմնական պատիժներն արգելվում են:

3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:

Հոդված 26, մաս 1, ՀՀ Սահմանադրություն [7]

Խոշտանգումը ցանկացած գործողություն է, որի միջոցով պետական պաշտոնյա անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդ, կամ նրանց հրահրմամբ և գիտությամբ կամ լռելյայն համաձայնությամբ, որևէ անձի մտածված կերպով հասցնում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ մարմնական կամ մտավոր, նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, իր կամ երրորդ անձի կատարած հանցանքի կամ այն գործած լինելու մեջ կասկածելու համար, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ամեն մի այլ պատճառով: Այս բնորոշման մեջ չեն մտնում այն ցավն ու տառապանքը, որոնք ծագում են սոսկ օրինական սանկցիաների պատճառով, անբաժանելի են այդ սանկցիաներից կամ ծագել են դրանցից՝ պատահականորեն[8]:

Խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից ազատ լինելը անձի բացարձակ իրավունք է և ենթակա չէ սահմանափակման[9]: Որպեսզի դաժան վերաբերմունքն առաջացնի անձի վերոհիշյալ իրավունքի խախտում, անհրաժեշտ է, որպեսզի այն հասնի դաժանության նվազագույն մակարդակի, պետք է հաշվի առնվեն նաև կոնկրետ գործի հանգամանքները, ինչպես, օրինակ, վերաբերմունքի բնույթը, թե ինչ համատեքստում է այն տեղի ունեցել, դրա տևողությունը, ֆիզիկական և հոգեբանական հետևանքները, իսկ որոշ դեպքերում նաև՝ անձի տարիքը, սեռը և առողջական վիճակը[10]: Անհրաժեշտ է տարբերակել խոշտանգումը անմարդկային վերաբերմունքից, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից, որտեղ խոշտանգումը անձին դիտավորությամբ պատճառված այն վնասն է, որը պատճառել է շատ լուրջ և դաժան տառապանք, մինչդեռ նվաստացնող վերաբերմունք կարող է համարվել այն վերաբերմունքը, որ անձի մոտ առաջացնում է վախի, վտանգի, ստորացված լինելու զգացողություններ[11], իջեցնում է անձի հեղինակությունը և դերը, մարդկային արժանապատվությունը կամ ստիպում է անձին գործել իր կամքին կամ խղճին հակառակ[12]: Որոշ դեպքերում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունը, սպառնալիքները, նույնպես նվաստացնող վերաբերմունք է համարվում[13]: Այս դեպքերում անհրաժեշտ չէ պետության կողմից դիտավորության առկայությունը անձի անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրավունքի խախտման փաստը ճանաչելու համար[14]:

---

[7] Հոդված 26, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ.

[8] Հոդված 1, «Խոշտանգումների եւ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձեւերի դեմ» ՄԱԿ-ի 1984թ.կոնվենցիա

[9] Փրեթթին ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ Թիվ 2346/02 վճիռ, §49

[10] Փրայսն ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ ԹԻՎ 33394/96 վճիռ, Կոստելլո-Ռոբերթսն ընդդեմ Միացյալ Թագավորության Թիվ 13134/87 ՄԻԵԴ վճիռ, §30

[11] Այդինն ընդդեմ Թուրքիայի Թիվ 23178/94 ՄԻԵԴ վճիռ

[12] Արևելյան աֆրիկյան ասիացիներն ընդդեմ Միացյալ Թագավորության Թիվ ՄԻԵԴ 4715/70, 4783/71 և 4827/71 գործերով

[13] Սմիթը և Գրեդին ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ Թիվ 33985/96 և 33986/96 գործեր

[14] Փիրսն ընդդեմ Հունաստանի Թիվ 28524/95 ՄԻԵԴ վճիռ, ինչպես նաև Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի հարցերով ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողի U.N. Doc. No. A/56/156 2001թ. զեկույց փաստաթուղթ

ԼԳԲՏ անձանց իրավիճակը զինված ուժերում

2016թ. զինվորական ծառայության մեջ գտնվող ԼԳԲՏ անձանցից երեք բողոք է արձանագրվել: Ծառայության ընթացքում սեռական կողմնորոշման բացահայտման դեպքում, անձը ենթարկվում է բռնության, նվաստացուցիչ վերաբերմունքի, ծաղրի, ինչպես ծառայակիցների, այնպես էլ հրամանատարական կազմի ու զորամասի այլ աշխատողների կողմից:

Նույնասեռական անձանց պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից ազատելու հարցում պետական մարմիններն առաջնորդվում են ՀՀ պաշտպանության նախարարի 410-13 հրամանով (Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի), համաձայն որի. *«Ներառում է անձի և վարքի խանգարումները, ներառյալ՝ անձի սպեցիֆիկ և խառը խանգարումները, սովորությունների և հակումների խանգարումները, սեռական նույնացման խանգարումները, սեռական նախընտրության խանգարումները, սեռական զարգացման և կողմնորոշման հետ կապված հոգեբանական և վարքային խանգարումները»:*

«Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի հարցմանն ի պատասխան 27.07.2016թ. ՀՀ Պաշտպանության նախարարությունից տեղեկացրել են, որ անձի՝ նույնասեռական լինելու հանգամանքը հնարավոր է լինում պարզել ռազմաբժշկական փորձաքննությամբ. *«հաշվի են առնվում փորձաքննվողի ներկայիս հոգեբանական, անձնային առանձնահատկությունները, այնպես էլ կենսագրական տվյալներն ու առանձնահատկությունները, անձը բնութագրող փաստաթղթերը և այլն: Միաժամանակ, փորձաքննության ընթացքում մեծ նշանակություն է տրվում փորձաքննվող անձի սեփական հայացքներին, տվյալ երևույթի նկատմամբ իր ունեցած վերաբերմունքին: Այսպես՝ եթե փորձաքննվողն իր նույնասեռական լինելը դիտում է որպես նորմալ, բնականոն երևույթ, չունի բարդույթներ, հոգեբանական արգելքներ և հասարակության մեջ ադապտացիայի խնդիր, ապա համարվում է հոգեպես առողջ և պիտանի զինվորական ծառայության համար: Իսկ եթե տվյալ անձն իր կողմնորոշումը ընդունում է հիվանդագին, ունի հոգեբանական ապրումներ, փորձում է թաքցնել իր զգացողությունները՝ ելնելով սոցիալական դիրքից, հասարակության կողմից չընդունվելու վախից, ցուցաբերում է անհաշվետվողականություն և անհարմարվողականություն իր և իրականության միջև, ապա տվյալ դեպքում, փորձաքննության շրջանակներում, դիտվում է որպես սեռական նույնացման, սեռական նախընտրության կամ սեռական զարգացման և կողմնորոշման հետ կապված հոգեբանական և վարքային խանգարում, և անձը ճանաչվում է ոչ պիտանի՝ համաձայն ՀՀ ՊՆ 08.04.13թ. թիվ 410 հրամանի 8-րդ հոդվածի պահանջների»:*

Նկարագրված դեպքում նկատի է առնվում անձի էգո-դիստոնիկ սեռական կողմնորոշումը, որը, Հիվանդությունների միջազգային դասակարգման (10-րդ վերանայում, 1990թ.)[15] համաձայն, ենթադրում է հետևալը՝ *«սեռի պատկանելությունն ու կողմնորոշումը կասկած չեն հարուցում, սակայն անհատը ցանկանում է, որ դրանք ուրիշ լինեն առկա լրացուցիչ հոգեբանական կամ վարքային խանգարումների հետևանքով և փորձում է բուժվել՝ այն փոխելու նպատակով»:*

Հետևաբար նման մոտեցումը իրավաչափ է և փորձագետ-հոգեբանի/հոգեբույժի համապատասխան եզրակացության առկայության դեպքում նույնասեռական անձին զինվորական ծառայությունից ազատելը վերջինիս իրավունքների խախտում չի համարվում:

Այստեղ խնդիրն այն է, որ այն պահից, երբ բացահայտվում է անձի սեռական կողմնորոշումը, նրան զինվորական ծառայությունից ազատում են հենց այս հիմքով՝ անկախ նրանից, թե իրականում խնդիրն առկա է, թե ոչ:

Զինվորական ծառայությունը պարտադիր է զորակոչի տարիքի հասած անձանց համար, որոնք օրենքով սահմանված կարգով չեն ճանաչվել ծառայությանը ոչ պիտանի:

[15] ՀՀ առողջապահության նախարարություն և ԱՀԿ. Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգիչ, տասներորդ վերանայում (ՀԴ-10), Երևան (2013թ.)

Այսինքն անձը, որի նկատմամբ կիրառվում է նշված պրակտիկան, զրկվում է զինվորական ծառայություն իրականացնելու հնարավորությունից, իսկ զինվորական ծառայության պիտանի ճանաչված անձինք զրկվում են զինծառայությունից ազատվելու արտոնությունից՝ կրկին իրենց սեռական կողմնորոշումից ելնելով, այսինքն, ենթարկվում են անուղղակի խտրականության:

Ծառայության ընթացքում նույնասեռական կողմնորոշման բացահայտման դեպքում, անձին մեկուսացնում են մյուս ծառայողներից, թույլ չեն տալիս ճաշել ճաշարանում, տեղափոխում են բուժկետ, երբեմն տանում հոսպիտալ «բուժման» նպատակով և ի վերջո, շատ դեպքերում, ուղարկում են հոսպիտալային ծառայության:

Բացի այդ, դեպք է եղել, երբ անձը հայտնել է, որ նույնասեռական է, Զինված ուժերում փորձել են պարզել և նյութեր նախապատրաստել, թե անձն իրո՞ք նույնասեռական է, թե այդ հայտարարությունը միտված է պարտադիր ժամկետային ծառայությունից խուսափելու համար, վերջինիս դեպքում քրեական գործ հարուցելու նպատակով: Քրեական գործի նյութերի նախապատրաստման ընթացքում հարցաքննվում են անձի ընտանիքի անդամները, ընկերները, ծանոթները, ինչի արդյունքում նրանք ևս իմանում են անձի սեռական կողմնորոշման մասին, ինչն էլ անձնական կյանքի և գաղտնիության իրավունքի խախտում է:

Հարց է առաջանում. Ո՞րն է քրեական գործի նյութերի նախապատրաստման նպատակը, եթե նույնասեռական լինելը ինքնին որևէ հանցակազմի տարրեր չի պարունակում: Պրակտիկայում նմանատիպ իրավիճակներում նյութեր են նախապատրաստվում պարզելու համար, թե արդյոք առկա են անձի կողմից զինվորական ծառայությունից խուսափելու հանցակազմի տարրեր: Սակայն, եթե ՀՀ օրենսդրության համաձայն նույնասեռական լինելն ինքնին հիմք չէ զինվորական ծառայությունից ազատվելու համար, ապա ինչն է ստիպում ռազմական ոստիկանությանը անձի նույնասեռական լինելը դիտել որպես քրեական գործի հարուցման կամ դրա ուղղությամբ նյութերի նախապատրաստման հիմք:

Բացի այդ, անձի նկատմամբ նշանակվում և իրականացվում է դատաբժշկական փորձաքննություն՝ պարզելու համար նրա սեռական կողմնորոշումը: Փորձաքննության անցկացման կարգը ենթադրում է արժանապատվությունը նվաստացնող ընթացակարգ, որը իրականում պետք է կիրառվի ոչ թե անձի սեռական կողմնորոշումը պարզելու, այլ սեռական բնույթի բռնի գործողությունների դեպքի պարզման նպատակով:

Փինք Արմենիան պարզել է, թե ինչպես են իրականացնում այդ փորձաքննությունը: Այդպիսով, «սեռական կողմնորոշումը պարզելու փորձաքննությունն» իրականացնում է առողջապահության նախարարությունը: Կազմակերպության հարցմանն ի պատասխան գերատեսչությունից տեղեկացրել են.

«Փորձաքննության ընթացքում հոմոսեքսուալիզմի հետ կապված հարցերի պարզաբանման համար, փորձաքննվող անձին տրվում է «ծունկ-արմնկային» դիրք, որի պայմաններում ակնադիտորեն ուսումնասիրվում է հետանցքի շրջանը՝ միջհետույքային ակոսը, նրա խորությունը, հետանցքի հատվածը, ձևը, լայն բացվածությունը, լորձաթաղանթի վիճակը, սպիների կամ թարմ վնասվածքների առկայությունը, անհրաժեշտության դեպքում պատրաստվում են քսուկներ հետանցքի պարունակությունից՝ դատակենսաբանական փորձաքննության միջոցով սպերմատոզոիդների առկայությունը որոշելու համար: Բոլոր տվյալների հանրագումարից հետո տրվում է փորձագետի եզրակացությունը, որը տրվում է նախաքննական մարմին»:

Ծառայության մեջ գտնվող անձինք չեն ցանկանում խախտված իրավունքները վերականգնելու համար որևէ քայլ ձեռնարկել՝ պատճառաբանելով, որ դրանից հետո հրամանատարական կազմի վերաբերմունքն իրենց նկատմամբ կարող է էլ ավելի վատթարանալ:

ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքը առողջապահական ոլորտում

2013թ. առողջապահության նախարարի N06 հրամանով նույնասեռականներին, ռիսկային խումբ համարելով, արգելվել է արյան դոնոր լինել, իսկ հրամանի մեջ նույնասեռական բառի փոխարեն օգտագործված է վիրավորական «արվամոլ» բառը: Այս կապակցությամբ LGBTnews.am-ը հարցում էր ուղարկել առողջապահության նախարարություն՝ պարզելու, թե ինչու են նույնասեռականները ներառված ռիսկային խմբում և ինչպե՞ս են բուժհաստատությունները պարզում արյան պոտենցիալ դոնորների սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը[16]: Հարցմանն ի պատասխան ՀՀ Առողջապահության նախարարության գլխավոր արյունաբան Սմբատ Դաղբաշյանը հայտնել է, որ *նույնասեռական լինելը արյան դոնոր հանդիսանալու խոչընդոտ չէ, սակայն նույնասեռական անձինք պատկանում են ռիսկային խմբին, ինչը պայմանավորված է աշխարհում նույնասեռականների շրջանում ՄԻԱՎ-ի վարակակրության բարձր տարածվածությամբ:* Այդուհանդերձ, արյունաբանը նաև նշել է, որ *իրենք հետևում են արյան ծառայության միջազգային չափորոշիչներին և հայաստանյան արյան ծառայությունը քննարկում է նույնասեռականներից արյունատվություն կատարելու խնդրի վերաբերյալ հնարավոր փոփոխություններ կատարելու հարցը՝ նպատակ ունենալով ապագայում շեշտադրում կատարել ոչ թե ինքնին նույնասեռական լինելու փաստին, այլ տվյալ անձի վարքագծին:*

Պատասխանը ստանալու ժամանակ ՀՀ Առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի» տվյալներով Հայաստանում ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի ընդամենը 2,8%-ն է փոխանցվել հոմոսեքսուալ ճանապարհով (զեկույցը գրելու ժամանակ՝ 3%-ը)[17]:

Ծաղր տրանսգենդեր անձի նկատմամբ

2016թ. առողջապահության ոլորտում արձանագրվել են անձի արժանապատվությունը նվաստացնող և խտրականության դեպքեր:

Մասնավորապես, Տրանսգենդեր Գ.Ա.-ն փողոցում հարձակման ենթարկվելուց հետո, վնասվածքների ապաքինման համար դիմել էր Համալսարանական կլինիկա թիվ 1 հիվանդանոց: Բուժսպասարկում տրամադրող անձնակազմը սպասարկման ընթացքում ցուցաբերել է ծաղրական վերաբերմունք: Մասնավորապես, բուժանձնակազմի անդամները Գ.Ա.-ի ներկայությամբ քմծիծաղել են և բարձրաձայն ծիծաղել հարևան սենյակում: Նրանց շարքում եղել են ուռոլոգը և բժշկական անձնակազմի մյուս անդամները:

Առաջին բուժօգնություն տրամադրող բժիշկների զննումից հետո անձը հարցրել է, թե արդյոք այլ հետազոտություններ չի կարող անցնել, ինչին ի պատասխան բուժօգնություն տրամադրողն ասել է. «Ուզո՞ւմ ես արյան անալիզ հանձնի, տեսնենք հո շեղումներ չունես, բուժենք»: Հիվանդանոցի անձնակազմի ստեղծած միջավայրը կաշկանդել է Գ.Ա.-ին ամբողջական զննություն անցնել:

ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքն ընտանիքներում

2016թ. ընթացքում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ընտանեկան բռնության յոթ դեպք է գրանցվել:

Ծնողներն իրենց զավակների սեռական կողմնորոշման մասին իմանում են հիմնականում անձնական նամակագրություններից՝ կոտրելով նրանց սոցիալական ցանցերի էջերը:

[16] Հայաստանում առկա է խտրականություն նաև արյան դոնորության հարցում, LGBTnews.am, 19.12.2016, https://goo.gl/qrahck

[17] ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում, https://goo.gl/HQVaYW

Եղել են դեպքեր, որ ծնողները երեխայի դպրոցից են իմացել նրա սեռական կողմնորոշման մասին:

Այսպիսի դեպքերում բռնությունը տևական է՝ կարող է ձգվել ամիսներ, և «պատժիչ» գործողություններին մասնակցում է գրեթե ողջ ընտանիքը: Բացի ծեծից և հոգեբանական բռնությունից, ընտանիքի անդամները ապօրինաբար տնային կալանքի տակ են պահում երեխաներին: *Դեպք է եղել, որ զավակին իր կամքին հակառակ հանել են ուսումնական հաստատությունից:*

Հնարավորության դեպքում անձը ապաստան է գտնում ընկերների կամ ՀԿ-ների տրամադրած կացարաններում, սակայն այս դեպքում էլ նա լիովին պաշտպանված չէ, քանի որ ընտանիքի անդամները շարունակում են փնտրել նրան, և հայտնաբերելու դեպքում բռնի ուժով կամ խաբելով վերադարձնում են տուն ու կրկին ենթարկում բռնության ու տնային կալանքի:

Ընտանեկան բռնության դեպքում անձը հատկապես խոցելի է ոչ միայն ֆինանսական և դուրսը մնալու վտանգի պաճառով, այլև իր խախտված իրավունքները վերականգնելու անհնարինության զգացումից, որովհետև գործը երբեք իրավապահ մարմիններին չի հասնում, քանի որ անձը ընտանիքի անդամների դեմ չի ուզում ոստիկանություն կանչել: Բացի այդ, ոստիկանություն չդիմելու պատճառ է նաև բռնության հաճախականության և ուժգնության բարձրացման վախը: *Եղել է դեպք, երբ տուժածը վախեցել է դիմել ոստիկանություն ոչ միայն իր, այլև իր ընկերներին չվնասելու պատճառով, քանի որ ընտանիքի անդամները ընկերների հասցեին ևս սպառնալիքներ են հնչեցրել:*

Ատելության հիմքով հանցագործություններ

2016թ. ատելության հիմքով հանցագործության երեք դեպք է արձանագրվել: Այս հանցագործությունները հաճախ լինում են գենդերային ինքնության հիմքով:

Ծեծել են ԼԳԲՏ ակտիվիստների

2016. փետրվարի 15-ին երեկոյան Երևանի կենտրոնական փողոցներից մեկում 3 անհայտ անձ հարձակվել ու ծեծի են ենթարկել 5 ԼԳԲՏ ակտիվիստի, այդ թվում՝ Փինք Արմենիայի 2 աշխատակցի և 2 տրանսգենդեր անձի:

Անհայտ տղամարդիկ ուշադիր նայել են տարածքով քայլող ակտիվիստներին, ինչից հետո նրանցից մեկը բարձրաձայն հայհոյել է ու անմիջապես հարվածել: Նրան են միացել մյուս երկուսը ու սկսել են ծեծել:

Հատկապես տուժել էր տրանսգենդեր անձանցից մեկը՝ Գ.Ա.-ն, որը հարվածներ է ստացել գլխի, դեմքի, ականջի, մեջքի հատվածներում ու ամորձիներին (տե՛ս «Ծաղր տրանսգենդեր անձի նկատմամբ» բաժինը, որտեղ Գ.Ա.-ն դիմել է բուժհաստատություն): Ծեծի ենթարկողները իրենց խոսքերի մեջ մեղադրել են տրանսգենդեր անձին արտաքին տեսքի համար, սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցրել:

Ծեծկռտուքը տևել է մոտ 3 րոպե՝ տեսնելով, որ այլ անձինք են մոտենում, երեք տղաները դիմել են փախուստի: Տուժողները դիմել էին ոստիկանություն, սակայն մեղավորները այդպես էլ չբացահայտվեցին:

Դանակահարել են տրանսգենդեր անձի

Երևանի Մանկական այգուն հարող տարածքում անհայտ անձը մոտեցել է տրանսգենդեր անձին, դանակով հարված է հասցրել մեջքի շրջանում և դիմել փախուստի: Անձը ենթարկվել է վիրահատության: Այլ անձինք ճանաչել են դանակահարողին, զանգել են նրան, հանդիպել և հանձնել են ոստիկանությանը:

Ոստիկանությունում նախապատրաստված նյութերի արդյունքում հարուցվելիք քրեական գործի ընթացքը կանխելու նպատակով դանակահարող անձը ստորագրել է

պարտավորագիր, որով խոստովանել է արարքը իր կողմից կատարված լինելու փաստը և պարտավորվել է փոխհատուցել դանակահարված անձի վիրահատության համար նախատեսված վճարումը, պայմանով, որ տուժածը հետ կվերցնի իր դեմ ուստիկանություն ներկայացված բողոքը: Բողոքը հետ է վերցվել, սակայն վիրահատության փոխհատուցումը այդպես էլ չի կատարվել:

1.3. Խտրականության և ատելություն սերմանող խոսքից զերծ մնալու իրավունք

Ատելություն և անհանդուրժողականություն պարունակող խոսքի արգելքը ենթադրում է ոչ միայն պետության կողմից նման խոսքի տարածման արգելքը, այլև պարտականություն ձեռնարկելու համապատասխան միջոցներ, որպեսզի նման խոսքը երրորդ անձանց կողմից չխրախուսվի[18]: Այս առիթով պետության պարտականությունն է ձեռնարկել օրենսդրական և այլ միջոցառումներ կանխելու անձանց նկատմամբ անհանդուրժողականության և ատելության որոշակի հարթակներում, որոշակի ձևերով և բովանդակությամբ սերմանումը:

2016թ. ԼԳԲՏ անձանց դեմ ատելության խոսքի չափաբաժինը գրեթե չէր տարբերվում նախորդ տարիներից: Սակայն հարկ է նշել, որ լրատվամիջոցները ԼԳԲՏ անձանց թեմաներին անդրադառնալիս ավելի հավասարակշիռ էին և փորձում էին ճիշտ տերմինաբանություն օգտագործել: 2016թ. կտրվածքով նախորդ տարիների համեմատ լրատվամիջոցներում ավելի հաճախ էին հանդիպում նյութեր, որտեղ ԼԳԲՏ անձինք դրական լույսի ներքո էին ներկայացվում: Դրա մասին է վկայում փետրվար ամսին ԼԳԲՏ ակիվիստների ծեծի և նույնասեռական տղային պարի խմբից հեռացնելու (այս դեպքերի մասին՝ ստորև) մասին դեպքերի լուսաբանումները, երբ մի շարք լրատվամիջոցներ, բացի դեպքերը բազմակողմանի ներկայացնելու պատրաստակամությունից նաև համագործակցում էին ԼԳԲՏ մարդու իրավունքների պաշտպան կազմակերպությունների հետ ճիշտ տերմինաբանություն օգտագործելու հարցում:

Այդուհանդերձ, հակախտրականության թեմայով մամուլի ասուլիսի ընթացքում hraparak.am-ի լրագրողներից մեկը ԼԳԲՏ մարդու իրավապաշտպաններին հարց ուղղեց. «Եթե խտրականության մասին օրենքը դուրս գա և թույլատրվի նույնասեռականների ազատ ելքումուտքը, օրը ցերեկով նրանց տեսնենք, դա նորմա՞լ եք համարում (...) այգիներում, եթե երեխաները տեսնեն նույնասեռականներին ինչպես սիրահար զույգ, արդյո՞ք դա փոքրուց նրանց հոգեբանության վրա չի ազդում»[19]: Ինչի՞ն ի պատասխան Փինք Արմենիա կազմակերության գործադիր տնօրեն Մամիկոն Հովսեփյանը պատասխանեց. «Դուք հիմա օրը ցերեկով նույնասեռական չե՞ք տեսնում»: Լրագրողը պատասխանեց. «Տեսնում եմ և դա նորմալ չի»: Հովսեփյանի հաջորդ հարցին, թե արդյոք նորմալ չի, որ իրենք խոսում են իրար հետ, լրագրողն ասաց, որ նորմալ է, սակայն, երբ Հովսեփյանը բացեիբաց ասաց, որ ինքը նույնասեռական է և կրկնեց, թե արդյոք նորմալ չի, որ իրենք զրուցում են, լրագրողն ասաց, որ նորմալ չի:

2016թ. մայիսին բացվել է stop-g7.com, որը թիրախավորելով ԼԳԲՏ մարդկանց հարցերով զբաղվող կոնկրետ ակտիվիստների՝ նրանց նկատմամբ ատելություն սերմանող նյութեր է տարածում՝ վիրավորական արտահայտություններով համեմելով և ներկայացնելով նրանց որպես երկրի սպառնալիք: Կայքն ակտիվ տարածվում է սոցիալական ցանցերում, ինչի հետևանքով բազմաթիվ օգտատերեր ԼԳԲՏ անձանց վերացնելու կոչեր են անում:

[18] Օզգուր Գյունդեմն ընդդեմ Թուրքիայի Թիվ 23144/93 ՄԻԵԴ վճիռ
[19] «Բռնություններ սեռական փոքրամասնության ներկայացուցչների նկատմամբ...», Մեդիա կենտրոն, 24.02.2016, https://youtu.be/E4r4cuqJcHQ

Ատելության և հանցագործության կոչեր ամենալայն տարածում ունեցող հաղորդման ժամանակ

2016թ. փետրվարի 19-ին Ա-ԹիՎի հեռուստաընկերության «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդման հերթական թողարկման ժամանակ Արմավիրի մարզի բնակիչ էդգար Նահապետյանը գանգատվում էր, որ իր սեռական կողմնորոշման պատճառով չի կարողանում աշխատանք գտնել, քանի որ գործատուները չեն ցանկանում, որ իրենց մոտ նույնասեռական անձ աշխատի:

էդգար Նահապետյանն անձամբ էր դիմել Ա-ԹիՎի՝ հույս ունենալով, որ ծրագրին մասնակցելը կօգնի իրեն աշխատանք գտնելու հարցում: Սակայն հաղորդման հյուրերից փաստաբան Գարիկ Գալիկյանը թողարկման ընթացքում էդգար Նահապետյանի հասցեին, բղավելով, հնչեցրել է մի շարք վիրավորական արտահայտություններ, սպառնալիքներ և ատելության կոչեր:

Մասնավորապես փաստաբանն ասել է. «Միշտ պայքարել եմ իրանց [նույնասեռականների] դեմ, պայքարում եմ ու պայքարելու եմ: Երբ տեսնեմ, տրորելու եմ, ոտնատակ եմ տալու, ու պետք է վառել, այո (...) դուք գիտե՞ք իրա նմանների պատճառով բերդերում էսօր ինչքան մարդ ա փտում, ինչի՞ համար, զուտ միայն իրանց խոսքի համար: Այո, միշտ տրորել եմ, տրորելու եմ ու գնալու եմ տենց էլ առաջ: Կարող եք իմ վրա քրեական գործ հարուցել տալ, կարող եք հաղորդում տալ, ինչ ուզում եք, արեք»: Ինչպես նաև հավելել է. «Այո՛, իմացի՛ր, որ հալածում են ձեզ, ու ես միշտ հալածելու եմ քո նմաններին: Ու այն, որ ընկերներդ ասում են, որ հոգեբանն ասել է վառել, դա հոգեբանը չի ասել, դա ես եմ ասել: Սպառնալիք է, կարող եք հաղորդում տալ»:

Հաղորդման մեկ այլ հյուր՝ ռեժիսոր Սարգիս Միքայելյանը՝ դիմելով էդգարին, ասել է. *«Այն մարդը, ով քեզ աշխատանք կտա, դրա գլուխը մուրճով կջարդեմ: Երևանի փողոցներում իմ երեխան է քայլում, իրեն հաճելի չէ, որ նա քո նման երևույթների հանդիպի»:*

Հաղորդման մյուս հյուրը՝ հոգեբան Մարիամ Մեհրաբյանը, կոչ է արել բուժել էդգարին և նույնասեռականությունը:

Հեռարձակումից հետո հաղորդումը լայն տարածում է գտել համացանցում, և էդգարն ու ԼԳԲՏ անձինք հայտնվել են ատելության կոչերի, արժանապատվությունը նվաստացող գրառումների թիրախում: էդգարին սկսել են ճանաչել դրսում ու վանկարկել նրան տեսնելիս, իսկ մորը, որը նույնպես ներկա էր հաղորդմանը, հեռացրել են աշխատանքից: Մայրը վերականգնվել է աշխատանքի մի քանի օր անց:

Հաղորդումից հետո ԼԳԲՏ իրավապաշպան կազմակերպությունների դիմումի հիման վրա փաստաբանական պալատը Գարիկ Գալիկյանի դեմ կարգապահական վարույթ է հարուցել: Միաժամանակ, փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը վարույթ հարուցելու եզրահանգման մեջ նույնասեռականների հանդեպ խտրական արտահայտություններ է արել՝ նշելով.

«Երկու տղամարդու և երկու կնոջ միությունն անբնական է, քանի որ ֆիզիոլոգիական հատկանիշներով նրանց ինքնին չի օժտում որդեծնությամբ: Հիշյալ մոտեցումն ամրագրված է նաև հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում բացառիկ նշանակություն ունեցող քրիստոնեական կրոնում»:

Այդուհանդերձ, փաստաբանների պալատը կարգապահական պատասխանատվության ենթարկեց Գարիկ Գալիկյանին՝ որպես տույժ կիրառելով նկատողություն:

ԼԳԲՏ անձանց նկատմամբ պետական պաշտոնյաների բացասական վերաբերմունքը

2016թ. Օռլանդոյի գեյ փաբերից մեկում տեղի ունեցած սպանդից հետո, որի հետևանքով զոհվել և վիրավորվել էին մի քանի տասնյակ մարդիկ, Հայաստանի և Հանրապետական կուսակցության նախագահ Սերժ Սարգսյանը ցավակցական ուղերձ էր հղել ԱՄՆ նախագահ Բարաք Օբամային՝ խստորեն դատապարտելով «անհանդուրժողականության այդ

զարհուրելի երևույթը» և ընդծել, որ «ամերիկացի ժողովրդին պատուհասած այդ դժբախտությունը կրկին ապացուցեց, որ ատելության բոլոր դրսևորումները, որոնց հաղթահարումը բոլորի հավաքական պարտքն ու առաքելությունն է, նույնիսկ 21-րդ դարում շարունակում են մնալ լրջագույն մարտահրավեր մարդկության համար»:

Այսպիսի ուղերձ հղելով հանդերձ՝ Հայաստանի իշխանական կուսակցության պատգամավորները իրենց խոսքում դրսևորում են ատելության քարոզ, անհանդուրժողական վերաբերմունք ԼԳԲՏ մարդկանց հանդեպ և իշխանությունը ոչ մի քայլ չի ձեռնարկում հաղթահարելու ատելության դրսևորումները:

Բացի այն, որ պետական բազմաթիվ պաշտոնյաների մոտ ընդգծված վատ վերաբերմունք է առկա ԼԳԲՏ անձանց նկատմամբ, նրանց նաև նյարդայնացնում է, երբ ԼԳԲՏ անձանց խնդիրների մասին հարցեր են բարձրացվում:

Պատգամավոր Խոսրով Հարությունյան

Ազգային ժողովի «Հանրապետական» (ՀՀԿ) խմբակցության պատգամավոր, Հայաստանի նախկին վարչապետ Խոսրով Հարությունյանի կարծիքով խտրականության դեմ օրենքի ընդունման խոսակցությունները գոյություն ունեն միայն դրամաշնորհներ ստանալու համար[20]: LGBTnews.am-ի հետ զրույցում նա նախ լրագրողից պահանջել է օրինակներ բերել, երբ Հայաստանում որևէ մեկը սեռական հիմքով խտրականության է ենթարկվել, ապա թույլ չտալով, որ լրագրողը օրինակներ բերի՝ բղավելով ասել է. «Սա շատ պարզ է. այդպիսի խնդիրներ բարձրացնելու նպատակը գրանտներ վերցնելն է: Գրանտների համար է, որ հանրային շրջանում սկսում եք այսպիսի խնդիրներ բարձրացնել»: Հարությունյանը, բղավելով հեռացել է, թույլ չտալով, որ լրագրողը շարունակի հարցեր տալ:

Պատգամավոր Միքայել Մելքումյան

Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավոր Միքայել Մելքումյանը խիստ բացասական վերաբերմունք ունի ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ[21]: LGBTnews.am-ին տված հարցազրույցում նախ նա խուսափում էր պատասխանել ԼԳԲՏԻ մարդկանց առնչվող որևէ հարցի, սակայն լրագրողի հարցին, թե ԼԳԲՏԻ անձինք ՀՀ այլ քաղաքացիների հետ հավասար պե՞տք է ունենան ամուսնանալու իրավունք, նա պատասխանել է. «Ուֆ-ուֆ, ուֆ-ուֆ: Ես ասում եմ, որ այդ երևույթի նկատմամբ խիստ բացասական վերաբերմունք ունեմ»: Արդյոք այդպիսի վերաբերմունքը խտրական չէ՞, Մելքումյանը պատասխանել է. «Թող ցուցաբերվի, խնդիր չկա»: Պատգամավորը նաև

[20] Խոսրով Հարությունյանին խիստ զայրացրեց խտրականության թեմայով հարցը, LGBTnews.am, 21.12.06, https://goo.gl/7tqWQP

[21] Արտաքուստ՝ քաղաքակիրթ ձև, ներքուստ՝ մերժելի կարծիք. պատգամավոր Մելքումյանի «բանաձևը», LGBTnews.am, 04.12.2016, https://goo.gl/FjL1L1

նշել է. «Որպես անհատ մերժում եմ այդ երևույթները, բայց եթե օրենքը նրանց տալիս է ինչ-որ բաներ անելու իրավունք՝ թող անեն»: Ի վերջո, Մելքումյանը պահանջել է ավարտել հարցազրույցն՝ ասելով, որ այլևս հարցերի չի պատասխանելու:

Պատգամավոր Արմեն Ռուստամյան

Ազգային ժողովի ՀՅԴ խորհրդարանական խմբակցության ղեկավար Արմեն Ռուստամյանը չի ընդունում ԼԳԲՏԻ անձանց, քանի որ, ըստ նրա, այդ մարդիկ չունեն «ընտանիք կազմելու բնական հատկանիշը» և իրենցով մարդկությունը չի բազմանում[22].

«Մենք ազգային նկարագիր ունեցող ազգ ենք: Մենք ունենք Սահմանադրություն, որում պարզ գրել ենք, որ կինն ու տղամարդը... եթե ձեր ասածով շարունակենք՝ տղամարդը տղամարդու հետ պիտի ամուսնանա... Իմ կարծիքով՝ սեռերը երկուսն են, ոչ թե վեցը»,- ասել է Ռուստամյանը LGBTnews.am-ին տված հարցազրույցում:

Նա նաև այն մտքին է, որ ոչ թե ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ է խտրականություն առկա, այլ նրանց իրավունքներն ապահովելն է խտրականություն.

«Այ երկուսը (նկատի ունի սեռերը) վեց սարքելը խտրականություն է: Սեռերը երկուսն են, 6-ը չեն, էդպես 16 էլ կդառնան, 32 էլ»,- ասել է նա:

Լրագրողի հարցին, թե ինչով է ԼԳԲՏԻ անձանց ամուսնության իրավունքը սահմանափակելու պատգամավոր Ռուստամյանի իրավունքը, վերջինս լրագրողին ասել է. «Գնա՛, ԼԳԲՏԻ անձանց գովքն այլ վայրում արա»: Հետագա հարցերին խուսափել է պատասխանել՝ ասելով, որ հարցազրույցն ավարտված է:

Պատգամավոր Վահե Էնֆիաջյան

Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավոր Վահե Էնֆիաջյանը դեմ է նույնասեռ հարաբերություններին և այն համարում է այլասերվածություն[23]: LGBTnews.am-ին տված հարցազրույցում նա պնդել է, որ ազատական մոտեցումների կողմնակից է, սակայն «Միևնույն ժամանակ կարևորում եմ բարոյական նորմերը, սկզբունքները, այլ ոչ այլասերվածությունը, խեղաթյուրումը: Ես կարծում եմ, որ մոլորակի ոչ մի քաղաքացի չպիտի խտրականության մեջ ապրի, բայց միևնույն ժամանակ չպիտի խեղաթյուրվեն հասարակական ընկալումները»,- ասել է նա:

Պատգամավորը մտավախություն ունի, որ եթե հավասարության (խտրականության դեմ) մասին օրենքում ԼԳԲՏԻ անձանց մասին դրույթ կամ հիշատակում լինի, ապա այդ մարդկանց «գործունեության ազդեցությունը կներթափանցի հասարակություն», իսկ այդ գործունեությունը նա որակել է «վնասակար»:

«Ես ավանդապաշտ եմ, Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդ եմ, նույնասեռական ամուսնությունների և հարաբերությունների կողմնակից չեմ: Ես ասում եմ, որ յուրաքանչյուր մարդ ինքն է որոշում՝ ինչպես ապրել, բայց միևնույն ժամանակ եկեք արձանագրենք, որ անձնական մոտեցումները չպիտի ազդեն ու ներգործեն այլ մարդկանց կյանքի վրա, որպեսզի նրանց վնասակար գործունեության ազդեցությունը չներթափանցի հասարակության մեջ»,- ասել է նա:

---

[22] Գնա՛, ԼԳԲՏԻ անձանց գովքն այլ վայրում արա. Արմեն Ռուստամյան, LGBTnews.am, 23.11.2016, https://goo.gl/vvq7ET

[23] Պատգամավոր Վահե Էնֆիաջյանն ավանդապաշտ է և դեմ է նույնասեռ հարաբերություններին, LGBTnews.am, 07.11.2016, https://goo.gl/YvxdeK

1.4. Խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք:

Հոդված 44, ՀՀ Սահմանադրություն [24]

«Հավաքը» որևէ կոնկրետ նպատակով կանխամտածված ժամանակավոր գումարում է մասնավոր կամ հանրային տարածքում: Այն ներառում է նաև փակ տարածքներում հանդիպումները[25]: Խաղաղ հավաքների ազատության իրավունքը վճռորոշ դեր է կատարում արդյունավետ ժողովրդավարական համակարգերի մշակման և գոյության գործում, որոնք հիմք են նախապատրաստում այնպիսի երկխոսության, բազմակարծության, հանդուրժողականության և ազատական հայացքների արտահայտման համար, որի պայմաններում հարգվում են փոքրամասնությունների կամ այլախոհների հայացքները և կարծիքները[26]:

Պետությունն ունի պարտականություն նպաստելու ազատ հավաքների իրավունքի իրացմանը, որը ներառում է՝ խաղաղ հավաքների մասնակիցների պաշտպանությունը այն անհատներից կամ խմբերից[27], որոնք նպատակ ունեն խափանել հավաքի անցկացումը կամ ցրել դրանք[28]:

ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը, պատգամավորներ Հայկ Բաբուխանյանը և Լևոն Մարտիրոսյանը դեմ են, որ ԼԳԲՏ համայնքը հավաք անցկացնի

Ազգային ժողովում հասարակական կազմակերպությունների մասին օրենքի քննարկման ժամանակ «Հանրապետական» (ՀՀԿ) խմբակցության պատգամավոր Հայկ Բաբուխանյանը իր մտահոգությունը հայտնեց, որ եվրոպական երկրների օրինակները իդեալ դարձնելով՝ Հայաստանում կարող է նույնասեռականների շքերթ անցկացվել[29]. «Եվրոպական օրինակը մի դարձրեք իդեալ, հակառակ դեպքում գեյ շքերթներ կունենանք, ես այդպիսի երկրում չեմ ուզում ապրել»: Բաբուխանյանին պատասխանեց նույնպես «Հանրապետական» խմբակցության պատգամավոր, ԱԺ փոխխոսնակ Էդվարդ Շարմազանովը՝ վստահեցնելով, որ Հայաստանում երբեք այդպիսի բան չի լինի: Դրան ի պատասխան Բաբուխանյանն ասաց. «Դժվար է ասել: Ես ձեր լավատեսությունը չեմ կիսում»: Իսկ Շարմազանովը վստահեցրեց, որ ԱԺ դահլիճում նստածների մեծամասնությունը չի ողջունում «գունավոր շքերթները»:

Խոսակցությանը միացավ «Հանրապետական» խմբակցության մեկ այլ պատգամավոր՝ Լևոն Մարտիրոսյանը՝ ասելով, որ նա ընդհանրապես դեմ է «գեյ պառադներին» և մասնավորապես դեմ է, որ Հայաստանում անցկացվեն: Մարտիրոսյանն իր խոսքը շարունակեց անեկդոտ պատմելով, որ «գեյ շքերթը կազմակերպում են տրավմատոլոգիայի կաբինետների մոտ, որ ծեծված գեյերին արագ հասցնեն բժիշկների մոտ»:

Թեև Հայաստանում դեռևս ԼԳԲՏ հավաք անցկացնելու նախաձեռնություն չի եղել, այդուհանդերձ վերը նշված խոսակցությունը բացահայտում է, որ ՀՀ իշխանությունները հավաքներ անցկացնելու սահմանադրությամբ տրված իրավունքի իրացմանը խոչընդոտելու միտում ունեն:

---

[24] Հոդված 44, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ.
[25] A/HRC/20/27, էջ 7, կետ 24
[26] A/HRC/20/27, էջ 20, կետ 84
[27] A/HRC/20/27, էջ 8, կետ 27
[28] A/HRC/20/27, էջ 10, կետ 33
[29] ԱԺ-ում պատգամավորները «գեյ շքերթներից» են բողոքում և ծեծված «գեյերի» մասին անեկդոտ պատմում, aravot.am/2016/10/06/813096, 06.10.2016

1.5. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը

1. *Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:*
2. *Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:*

Հոդված 31, ՀՀ Սահմանադրություն [30]

Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը սահմանում է յուրաքանչյուր անձի օրենքի առջև իրավասուբյեկտության ճանաչման, ինչպես նաև գաղտնիության իրավունքը[31]: Այն ներառում է պետության պարտականությունը ճանաչելու անձի կողմից ընդունված իր սեռը և գենդերային ինքնությունը[32]՝ որպես անձի կողմից անձնական կյանքի իրավունքի իրականացման ապահովում:

«Անձնական կյանքը» լայն հասկացություն է, ներառում է անձի ֆիզիկական և հոգեբանական ամբողջությունը: Որոշ դեպքերում այն ընդգրկում է նաև անձի ֆիզիկական և սոցիալական ինքնության ասպեկտները: Այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են, օրինակ, անձի գենդերային նույնականացումը, անունը, սեռական կողմնորոշումը և սեռական կյանքը, տեղավորվում են մարդու անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի պաշտպանության համատեքստում[33]: Անձի մարմինը իր անձնական կյանքի առավել ինտիմ բաղադրիչն է համարվում[34]:

Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը նաև նախատեսում է անձի ինքնազարգաց-ման, այլ անձանց հետ կապերի հաստատման և զարգացման հնարավորության ապահովման իրավունքը[35], անձնական հարաբերությունների արդյունավետ իրացման, տվյալ հանրույթում ապահով միջավայր ունենալու իրավունքը[36]:

Նույնասեռական տղայի հեռացումը պարի խմբակից

Ազգությամբ հայ ԱՄՆ քաղաքացի Գայլ Խանդիկյանը հեռացվել է հայկական ազգային պարերի խմբակից այն բանից հետո, երբ իր պարուսույց Հարութ Բաղդասարյանն իմացել է նրա սեռական կողմնորոշման մասին՝ ասելով, որ նույնասեռական անձինք հայ չեն, պետք է քարկոծվեն և հայկական պարեր պարելու իրավունք չունեն: Պարուսույցն ավելացրել է, որ հայկական ազգային պարերի մյուս խմբակների ղեկավարները նույնպես ճանաչում են Գայլին և թույլ չեն տա պարել իրենց խմբերում:

Լրատվամիջոցները փորձել են մեկնաբանություն ստանալ Հարութ Բաղդասարյանից, սակայն վերջինս հրաժարվել է խոսել:

[30] Հոդված 31, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ.
[31] Հոդված 16, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ 1966թ. միջազգային դաշնագիր
[32] Տես 35 հոդվածներ16 և 17, ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն 16
[33] Տես 9
[34] Y.F. ընդդեմ Թուրքիայի Թիվ 24209/94 ՄԻԵԴ վճիռ
[35] Տես 38
[36] Քոննորսն ընդդեմ Միացյալ Թագավորության Թիվ 66746/01 ՄԻԵԴ վճիռ

1.6 Օրենքի առջև հավասարության և հավասար պաշտպանվածության իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Հոդված 61, մաս 1, ՀՀ Սահմանադրություն [37]

Հավասարության իրավունքի պաշտպանությունը ենթադրում է ոչ միայն պետության կողմից ուղղակի միջամտության արգելքը, այլև վերջինիս պարտավորությունը պաշտպանելու երրորդ անձանց կողմից հնարավոր միջամտությունից: Պետության կողմից նման միջամտության հանդուրժումն անթույլատրելի է, քանի որ այն կնշանակի, որ որոշ փոքրամասնությունների նկատմամբ նախապաշարմունքն ու խտրականությունն արդարացված է և ընդունելի[38]: Այս իրավունքի պատշաճ իրականացումը նշանակում է պետության կողմից անհրաժեշտ օրենսդրական, վարչական և այլ միջոցառումներ իրականացնելու պարտականությունը, որոնք կապահովեն անձանց օրենքի առջև և փաստացի հավասարությունը[39]: Ավելին, հավասարության սկզբունքի ապահովումը չի նշանակում բոլորի նկատմամբ նույնանման վերաբերմունք նույնանման պայմաններում, այլև նշանակում է նաև պետության կողմից կառուցողական գործողությունների նախատեսում այն դեպքերում, երբ անհրաժեշտ է վերացնել կամ նվազեցնել այս կամ այն խմբի նկատմամբ խտրականություն ծնող կամ խթանող պայմանները[40]:

ԼԳԲՏ անձանց նկատմամբ դատարանների վերաբերմունքը

2014թ. «Իրավունք» թերթում հրապարակվել էր հոդված «Երբ համասեռամոլների գրան-տածիծ պաշտպանները պետական աջակցություն են ստանում» վերնագրով, որտեղ նյութի հեղինակ Իլոնա Ազարյանն իր վրդովմունքն էր հայտնել, որ Հայաստանի սպորտի և երիտասարդության նախարարությունը ԼԳԲՏ անձանց իրավապաշտպան «Նոր սերունդ» ՀԿ-ին շնորհակալագիր էր հանձնել՝ ճանաչելով Շիրակի մարզում տարվա լավագույն կազմակերպություն: Ազարյանը նյութում գրել էր. «Թե որ արժանիքների համար է հակաբարոյական մարդկային թափոնին պաշտպանող և անցյալ տարի Գյումրիում Անկախության տոնը՝ սեպտեմբերի 21-ը պացիֆիստական-տոլեռաստական ակցիայով պղծած տվյալ կազմակերպությունը ճանաչվել տարվա լավագույն, փորձեցինք պարզել ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարության հարցերի երիտասարդական քաղաքականության վարչության պետ…»:

«Նոր սերունդ»-ը դիմել էր դատարան՝ իրենց պատիվն ու արժանապատվությունը վիրավորելու համար: Սակայն ընդհանուր իրավասության դատարանը մերժել էր հայցը՝ համարելով, որ Ազարյանն իրացրել է իր խոսքի ազատության իրավունքը: «Նոր սերունդը» բողոքարկել էր գործը վերաքննիչ դատարանում: 2016թ. մարտին Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն, նույնպես մերժվեց հայցը՝ ուժի մեջ թողնելով ընդհանուր իրավասության դատարանի վճիռը:

Գործի հետ կապված իր դիրքորոշումն է հայտնել նաև լրագրողների ու փաստաբաններից կազմված Տեղեկատվական վեճերի խորհուրդը, ըստ որի՝ նշված հոդվածում հնչեցվել են արտահայտություններ և կոչեր, որոնք ծայրահեղականության, ատելության խոսքի դրսևորումներ են: Մինչդեռ դատարանը այդ հանգամանքը առարկա չի դարձրել, թեև հայցվորները այդ հարցը հստակորեն բարձրացրել էին իրենց հայցում:

[37] Հոդված 61, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ, մաս 1
[38] Եհովայի վկաների Գլդանի Միաբանությունն ընդդեմ Վրաստանի Թիվ 71156/01 ՄԻԵԴ վճիռ, §141
[39] ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն 18, մաս 6
[40] ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն 18, մաս 10

ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրավապահ մարմինների վերաբերմունքը

Ոստիկանությունը գործին ընթացք տալու փոխարեն տուժողին ուղորդել է հոգեբուժարան

Փինք Արմենիայում գրանցված դեպքի համաձայն, տրանսգենդեր անձը պատմել է, որ դիմել է ոստիկանություն՝ հայտնելով, որ Երևանի Կոմայգու տարածքում սեռական ծառայություններ տրամադրելու իր աշխատանքն իրականացնելիս, անհայտ անձը, նստեցնելով իր մեքենան, դանակը պահել է նրա կոկորդին և գողացել վերջինիս բնակարանի բանալին, մոտը եղած գումարը, այնուհետև մեքենան կանգնեցրել է բանկոմատի մոտ և ստիպել նրան բանկոմատից հանել իր ունեցած գումարը, ինչն էլ տրանսգենդեր անձն արել է:

Դիմում ներկայացնելուց օրեր անց ոստիկանությունից զանգել են տուժողին ու խնդրել ներկայանալ ոստիկանության բաժին՝ պատճառաբանելով, որ պետք է ուղղորդեն հոգեբուժական հաստատություն առողջական վիճակի զննության:

Ըստ նրա, ոստիկանության ծառայողները, հաշվի առնելով այն փաստը, որ ինքը տրանսգենդեր է և տրամադրում է սեռական ծառայություն, կարծում են, որ հոգեկան առողջության խնդիրներ ունի, ուստի չեն հավատում իր ներկայացրած բողոքին:

Ոստիկանները հետաքրքրվում են նույնասեռական տղամարդու ինքնությամբ

Փինք Արմենիայում գրանցված դեպքի համաձայն, նույնասեռական տղամարդը հայտնել էր, որ ոստիկանը հարևաններին հարցրել է, թե ով է բնակվում բնակարանում, որը ինքն է վարձակալել: Բացի այդ, վերջինս նշել է, որ առաջին դեպքը չէր, որ ոստիկանությունը հետաքրքրվում է իրենով: Ըստ նրա, դա կապված էր իր սեռական կողմնորոշման հետ:

Ոստիկանությունը գործը շրջել է տուժողի դեմ

Նույնասեռական տղամարդը Փինք Արմենիային հայտնել էր, որ ոստիկանություն է դիմել այն բանից հետո, երբ վեճ է ունեցել իր հորեղբոր որդիների հետ, ինչի արդյունքում վերջիններս մի քանի անգամ հարվածել են փայտով: Ոստիկանությունը քրեական գործ էր հարուցել, սակայն հետագայում հորեղբոր կինը ոստիկանություն ցուցմունք է տվել առ այն, որ իրականում ոչ թե իր որդիներն են հարվածել տվյալ անձին, այլ անձն է հարձակում գործել իր վրա: Դիմողի պնդմամբ, քննիչը, ցուցաբերելով ակնհայտ կողմնակալ վերաբերմունք, որոշում է կայացրել նրան որպես մեղադրյալ ներգրավել գործին:

Անձը նաև հայտնել էր, որ նախկինում ևս խնդիր է ունեցել ոստիկանության հետ, քանի որ նրանց հայտնի է իր սեռական կողմնորոշման մասին՝ «Ա-ԹիՎի» հեռուստաընկերության «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդմանը մասնակցելու հետևանքով:

Ոստիկանությունում ծաղրել են նույնասեռական անձին՝ բողոք ներկայացնելիս

Նույնասեռական անձը Փինք Արմենիային հայտնել է, որ ինքը դիմել է ոստիկանություն, քանի որ գողացել էին իր իրերը: Ոստիկանությունում նա արժանացել է նվաստացուցիչ վերաբերմունքի՝ նրա սեռական կողմնորոշումը իմանալուց հետո, ոստիկանությունում ենթարկվել է ծաղրանքի և նրա նկատմամբ հնչեցվել են հայհոյանքներ, ինչի արդյունքում իր բողոքի շրջանակներում որևէ գործողություն չի կատարվել:

Արցախի ոստիկաններն ընդդեմ սանրվածքների

Հայաստանի լրատվամիջոցները փետրվարին լուր տարածեցին, որ Լեռնային Ղարա-

բաղի Հանրապետության (այժմ՝ Արցախի Հանրապետության) ոստիկանությունը մտնում է մայրաքաղաք Ստեփանակերտի վարսավիրանոցներ և պահանջում, որ երեխաներին աբստրակտ սանրվածքներ չանեն՝ այդպիսով նպատակ ունենալով պայքարելու նույնասեռականության դեմ[41]: Մասնավորապես, ըստ Հայկական ժամանակ թերթի տեղեկությունների, ոստիկանները ասել են վարսավիրներին, որ դպրոցահասակ երեխաներին «ջակի-ջուկի» սանրվածքներ չանեն, քանի որ քաղաքը լցվում է «գալուբոյներով»: Թեև վարսավիրները հաստատում էին այդ տեղեկությունը, սակայն ԼՂՀ ոստիկանության լրատվական ծառայության ղեկավար Ֆելիքս Հարությունյանը հերքել է այն՝ պնդելով, որ Արցախում նույնասեռականներ չկան. «Բացարձակապես հերյուրանք է, ոստիկանությունը նման գործողություններ չի կատարում, իսկ ինչ վերաբերում է ձեր նշած՝ իբր Ղարաբաղը լցվում է եսիմինչ բնույթի սեռական կողմնորոշում ունեցող մարդկանցով, ապա դա ինձ թվում է, բացարձակ ապատեղեկատվություն է: Ղարաբաղցին 50 կիլոմետր հեռավորության վրա դիրքեր է պահում, այդպիսի երևույթ չկա, այդպիսի բան չկա Ղարաբաղում, բացառվում է»,- ասել է Հարությունյանը:

[41] ԼՂՀ ոստիկանները վարսավիրանոցներում արգելում են դեռահասներին ջակի-ջուկի սանրվածք անել, 19.02.2016, armtimes.com/hy/article/79866

2. Անձի իրավունքներն ապահովելու, ապահով միջավայր ստեղծելու պետության պարտականությունը

*Ամուսնական տարիքի հասած **կինը և տղամարդը միմյանց հետ** իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն: Ամուսնության տարիքը, ամուսնության և ամուսնալուծության կարգը սահմանվում են օրենքով:*

ՀՀ սահմանադրություն, Հոդված 35[42]

2015թ. փոփոխված ՀՀ սահմանադրության համապատասխան հոդվածի դիտարկմամբ տպավորություն է ստեղծվում, թե արգելվել է նույնասեռ ամուսնությունները, քանի որ ամուսնանալու ազատության հոդվածում ընգծվել է, որ կինը և տղամարդը միմյանց հետ ամուսնանալու իրավունք ունեն:

Այդուհանդերձ, LGBTnews.am-ի թղթակից, նույնասեռական կին Ա.Մ.Մանուկյանը՝ ցանկանալով ամուսնանալ իր զուգընկերուհու հետ հարցում էր ուղարկել Հայաստանի արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանին՝ իմանալու, թե ինչ ընթացակարգով նրանք կարող են ամուսնանալ[43].

Հարցմանը պատասխանել էր արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության (ՔԿԱԳԳ) պետ Արգամ Ստեփանյանը. «ՀՀ սահմանադրության 35-րդ հոդվածի համաձայն ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ամուսնության կնքման համար անհրաժեշտ է ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական՝ տասնութ տարեկան տարիքի հասնելը, որը նախատեսում է ամուսնության գրանցում տղամարդու և կնոջ միջև»:

Այս պատասխանը ստանալուց հետո Ա.Մ.Մանուկյանը նոր հարցում է ուղարկում նախարարություն՝ կրկին հասցեագրելով Արփինե Հովհաննիսյանին, այսպիսի բովանդակությամբ.

«...Իմ հարցման մեջ ներկայացված հարցադրման պատասխանը, այն է՝ թե ի՞նչ ընթացակարգով ես ու իմ զուգընկերուհին կարող ենք ՀՀ-ում գրանցել նույնասեռ ամուսնություն և/կամ միություն, պարոն Ստեփանյանի պատասխան նամակում առկա չէ:

Սույն հարցմամբ խնդրում եմ տեղեկացնել.

1. *Կարո՞ղ է նույնասեռ զույգը Հայաստանի Հանրապետությունում գրանցել նույնասեռ ամուսնություն և/կամ միություն:*
2. *Եթե այո, ապա ի՞նչ ընթացակարգով, ո՞ր մարմիններում:*
3. *Եթե ոչ, ապա ՀՀ Սահմանադրության և/կամ օրենսդրության ո՞ր դրույթներն են արգելում նույնասեռ ամուսնությունների և/կամ միությունների գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:*

Այս հարցմանը կրկին պատասխանում է ՔԿԱԳԳ պետ Արգամ Ստեփանյանը՝ պարզաբանումներ ստանալու համար Մանուկյանին հրավիրելով նախարարություն.

Մանուկյանը մեկնել է նախարարություն: Հանդիպման մասին LGBTnews.am գրել է.

«Ա.Մ. Մանուկյանը հանդիպել է ՔԿԱԳ պետ Արգամ Ստեփանյանի հետ: Վերջինս իր աշխատասենյակ է հրավիրել նաև ՔԿԱԳ գործակալության կատարող Ալբերտ

[42] Հոդված 25, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ

[43] Արդարադատության նախարարության արձագանքը ԼԳԲՏԻ ամուսնության մասին հարցմանը, LGBTnews.am, 06.12.2016, https://goo.gl/A1aZxR

Վիրաբյանին ու ևս մեկ աշխատակցի, որոնք պարբերաբար միջամտել են Ստեփանյանի ու Մանուկյանի զրույցին: Հատկանշական է, որ ՔԿԱԳ պետ Արգամ Ստեփանյանը հանդիպումից առաջ տեղեկություններ է հավաքել Մանուկյանի՝ հարցման մեջ նշված բնակության վայրի, բնակարանի սեփականատիրոջ մասին, ինչի վերաբերյալ էլ եղել է Մանուկյանին ուղղված նրա առաջին հարցը: Քանի որ Ա.Մ. Մանուկյանը ձայնագրել է Ստեփանյանի հետ խոսակցությունը, սղագրությունը ներկայացնում ենք ստորև:

– Դուք այդ հասցեի բնակիչ ե՞ք, որ մեզ նամակներ եք ուղարկում:

– Ես այժմ բնակվում եմ այնտեղ:

– Վարձո՞վ եք ապրում:

– Ոչ, Հայաստանում չգտնվող իմ բարեկամի բնակարանն է:

– Որ մենք տվել ենք ձեզ պարզաբանումները, ի՞նչը ձեզ չի բավարարում:

– Նախ խնդրում եմ, որ նոր սենյակ մտած անձինք ներկայանան, որ ես տեղյակ լինեմ՝ ովքեր են ներկա մեր զրույցին:

– Եթե դուք ուզում եք, որ ներկայանան՝ կներկայացնենք: Ալիկ Վիրաբյան և (ձայնագրության մեջ անունը չի լսվում – խմբ.), մեր աշխատակիցներն են: Մենք ուզում ենք հասկանալ՝ ձեզ ինչ է պետք: Մենք կարծում էինք, որ մեր պարզաբանումը ձեզ կբավարարի:

– Եվ ինչո՞վ պետք է ձեր պատասխանն ինձ բավարարի:

– Դուք ուզում եք գրանցել ամուսնություն, մենք էլ ասում ենք, որ դա հնարավոր չէ:

– Ի՞նչ պատճառներով: Որքան ես գիտեմ՝ նույնասեռ ամուսնությունները որևէ օրենքով արգելված չեն, իսկ այն, ինչ քաղաքացուն արգելված չէ՝ թույլատրված է: Թե՞ ես սխալ եմ:

– Օրենքում հստակ գրված է՝ տղամարդը և կինը… էլ ի՞նչ ասեմ ձեզ:

– Կա՞ այդպիսի օրենք, այդպիսի դրույթ, որ նույնասեռ զույգերին արգելում է ամուսնանալ:

– Դուրս է գալիս, որ երկու տղամարդու մեջ ու երկու կնոջ մեջ, եթե գրված չի, որ չի կարելի, ուրեմն կարելի՞ է: Դուք տենց ե՞ք մտածում:

– Ես ձեզ եմ հարցնում:

– Եթե մենք լիազորված չենք էտ գործողությունը կատարել, ուրեմն չենք կարող կատարել: Սահմանադրությամբ պաշտոնյաները, պետական մարմինները կարող են անել այնպիսի գործողություններ, որոնք անելու համար օրենքով լիազորված են: Մենք օրենքով լիազորված չենք:

– Կներկայացնե՞ք ինձ գրավոր ձեր հիմնավորումները:

– Եթե ես մի գործողություն եմ կատարում, ես օրենքի շրջանակներում եմ դա անում: Ես օրենքով լիազորություն պիտի ունենամ դա անելու: Հիմա ես լիազորություն չունեմ դա անելու: Ասենք, օրինակ, ես չեմ կարող նույն ամուսնությունը չորս անգամ գրանցել, չեմ կարող անչափահասների ամուսնություն գրանցել, չեմ կարող արդեն ամուսնացած մարդու ամուսնություն երրորդ անձի հետ գրանցել, և այլն: Ինչո՞ւ չեմ կարող: Որովհետև լիազորված չեմ:

– Շատ լավ, ներկայացրեք, խնդրեմ, գրավոր այդ հիմնավորումը:

– Ես որքան հասկացա՝ հիմա ինչ էլ ցույց տամ՝ ձեզ միևնույնն է՝ գրավոր է պետք: Մենք դա էինք ուզում հասկանալ՝ դուք ինչ եք ուզում, ինչն է ձեզ անհասկանալի: Հիմա պարզ է. դուք ասում եք՝ մեզ ոչինչ չի արգելում գրանցել նույնասեռ ամուսնություններ, ինչո՞ւ չեք գրանցում: Ես էլ ասում եմ՝ լիազորված չեմ: Մենք գրավոր պատասխանն այնպես կպատրաստենք, որ դուք, կարծում եմ, բավարարված կլինեք»:

Օրեր անց Մանուկյանը Արգամ Ստեփանյանի անունից գրավոր պատասխան է ստացել, որտեղ գրված է. «Ի պատասխան ՔԿԱԳ գործակալությունում հանդիպման ընթացքում Ձեր հարցադրմանը, թե միասեռ ամուսնություններ գրանցելն արգելված չէ օրենսդրությամբ, որը ենթադրում է դրանց գրանցման հնարավորություն, տեղեկացնում եմ, որ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Հետևաբար ՔԿԱԳ մարմինը չի կարող կատարել այնպիսի գործողություն, այդ թվում նաև միասեռ ամուսնությունների գրանցում, որի համար օրենսդրությամբ իրավասու չէ»:

Այս պատմությունից հետևում է, որ Հայաստանում նույնասեռ ամուսնությունների արգեքը թյուրըմբռնում է, իրականում առկա է նույնասեռ ամուսնությունների օրենսդրական բաց, ոչ թե արգելք:

Այս կապացությամբ Ազատություն ռադիոկայանի ֆեյսբուքյան ասուլիսի ժամանակ նախարար Արփինե Հովհաննիսյանին հարց էր ուղղվել, թե երբ է օրենսդրական կարգավորում տրվելու նույնասեռ ամուսնություններին, ինչին նախարարը պատասխանել էր.

«Գործակալության պետի կողմից և՛ ընդունելություն է կազմակերպվել, և՛ պատշաճ ու սպառիչ պատասխան է տրվել՝ սահմանադրական իրավակարգավորման շրջանակներում: Ես այս հարցով շատ բան չունեմ ավելացնելու»:

Եզրակացություն

2016թ. ևս ցույց տվեց, որ Հայաստանում առկա չէ բավարար կամք ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքները հարգելու համար: ՀՀ նախագահը ցուցաբերում է երկակի ստանդարտներով մոտեցում, մի կողմից՝ դատապարտելով այլ երկրի քաղաքացիների նկատմամբ ատելության դրսևորումները, մյուս կողմից՝ բացարձակ ոչ մի քայլ չձեռնարկելով իր իսկ ղեկավարած պետության ԼԳԲՏ քաղաքացիների մարդու իրավունքները հարգելու, նրանց նկատմամբ ոտնձգությունները վերացնելու ուղղությամբ:

Իշխող Հանրապետական խմբակցությունը շարունակում է նսեմացնել և ատելության քարոզ իրականացնել ԼԳԲՏ անձանց դեմ, ինչը պարարտ հող է ստեղծում, որպեսզի իշխանական մյուս օղակները ևս ԼԳԲՏ մարդկանց հանդեպ դրսևորեն խտրական վերաբերմունք և նրանց խնդիրներին վերաբերվեն ծաղրով ու անուշադրությամբ:

Խտրականության արգելքի վերաբերյալ դրույթ է նախատեսված ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ ներպետական օրենսդրության մաս կազմող միջազգային պայմանագրերով ինչը, սակայն, չի ապահովում ԼԳԲՏ անձանց՝ պետական մարմինների խտրական վերաբերմունքից զերծ մնալը:

ԼԳԲՏ անձանց իրավունքների պատշաճ իրացումն ապահովող օրենսդրական կարգավորումների բացակայությունը պատճառ է, որ հասարակության հոմոֆոբ հատվածը պատասխանատվություն կրելու զգացում չունենա ԼԳԲՏ անձանց դեմ ոտնձգություններ իրականացնելիս, բացի դա իրավապահ մարմինների և հասարակության այդ հատվածի կարծիքների հիմնականում համընկնումը արգելք է, որպեսզի բացահայտվեն ԼԳԲՏ ածանց դեմ իրականացված զանցանքներն ու հանցանքները: Արդյունքում առկա օրենսդրական կարգավորումների շրջանակներում սեռական կողմնորոշմամբ և/կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունների բացահայտումը և իրավախախտներին պատասխատավության ենթարկելը գործնականում նույնպես չի հաջողվում:

ԼԳԲՏ անձանց նկատմամբ այսպիսի վերաբերմունքը իշխանական օղակից տարածվում է մինչև ընտանիքներ ու այսպիսի պայմաններում ծնողների համար գոյություն չունի այն դաշտը, որտեղ նրանք կարողանան ընդունել իրենց ԼԳԲՏ զավակին: Մյուս կողմից, Հայաստանում նաև գոյություն չունի ընտանեկան բռնության մասին օրենք, որը մեխանիզմներ կարող էր ստեղծել ընտանիքներում ԼԳԲՏ անձանց նկատմամբ դաժան վերաբերմունքի կանխարգելման համար:

ԼԳԲՏ անձինք իրենց մարդու իրավունքների խախտման դեպքերով հաճախ են խուսափում դիմել անգամ Փինք Արմենիա, քանի որ ունեն անվստահություն իրավապահ և դատական մարմինների նկատմամբ: Գործը առաջ չեն տանում, քանի որ վախ կա, որ նախաքննության ընթացքում կբացահայտվի իրենց սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը, որովհետև գործնականում նման դեպքեր եղել են:

Առաջարկություններ

Պետական մարմիններին՝

- Դադարեցնել պետական մարմինների ներկայացուցիչների կողմից ԼԳԲՏ անձանց վիրավորող, նրանց նկատմամբ ատելությունը և խտրականություն սերմանող հայտարարությունները: Ձեռնարկել համապատասխան միջոցներ կանխելու պետական մարմինների ներկայացուցիչների կողմից ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքը, իսկ տեղի ունեցած դեպքերում՝ այդ անձանց պատասխանատվության ենթարկել:
- Ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնել ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների առիթով՝ բացառելով քննություն իրականացնող մարմիններում ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական, կանխակալ վերաբերմունքը և դադարեցնելով ԼԳԲՏ անձանց դիմումների դեպքում գործը ի վնաս տուժողի լուծելու պրակտիկան:
- Ձեռնարկել համապատասխան միջոցներ փակ հաստատություններում ԼԳԲՏ անձանց անվտանգությունն ապահովելու, դաժան և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերը կանխելու, իսկ նման դեպքերում՝ պատշաճ քննություն իրականացնելու համար:
- Ձեռնարկել համապատասխան միջոցներ պետական մարմիններում ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքը կանխելու համար, այդ թվում՝ ոստիկանության և դատախազության մարմիններում ծառայողների, դատավորների վերապատրաստումների, իրազեկումների և այլ միջոցներով:
- Ընդունել խտրականությունը կանխարգելող, ինչպես նաև արգելող՝ քաղաքացիական, վարչական և քրեական պատասխանատվություն սահմանող առանձին համապարփակ օրենսդրություն, որը կապահովի խտրականությունից պաշտպանված լինելու անձի իրավունքը նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով:
- Վերանայել ատելության խոսքն արգելող ՀՀ օրենսդրությունը, սահմանել «ատելության խոսք» հասկացությունը, պատասխանատվություն սահմանել որոշակի հատկանիշներով օժտված անձանց, ներառյալ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքի արգելքը:
- Վերանայել ատելության հիմքով հանցագործություններն արգելող ՀՀ օրենսդրությունը, մասնավորապես նախատեսել անձի նկատմամբ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունը՝ որպես քրեական պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:
- Մշակել և կիրառել մեխանիզմներ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունների ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննության ապահովման համար, ներառյալ հանցագործության շարժառիթի բացահայտմանն ուղղված համապատասխան իրավական և ընթացակարգային մեխանիզմների մշակումը:
- Խրախուսել ատելության հիմքով հանցագործություններից տուժած անձանց, ինչպես նաև ականատեսներին հաղորդել կատարված հանցագործությունների վերաբերյալ տվյալներ:
- Փաստագրել և վարել ՀՀ-ում ատելության հիմքով հանցագործությունների, ներառյալ անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունների վիճակագրություն՝ տեսանելի դարձնելով ատելության

հիմքով հանցագործությունների խնդիրը ՀՀ-ում:

- Ապահովել արդարադատության մատչելիությունը ատելության հիմքով հանցագործություններից տուժած անձանց համար, մասնավորապես՝ նախատեսելով անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ, որոնք կբացառեն անձի կրկնազոհացման վտանգը, կապահովեն անձի անվտանգությունը և կնախատեսեն վնասների հատուցման համընդգրկուն մեխանիզմներ:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարներ պետական մարմինների ծառայողների, մասնավորապես ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, ՀՀ Կառավարության ներկայացուցիչների և պաշտոնատար այլ անձանց շրջանում:
- Խթանել հանդուրժողականության և հավասարության գաղափարները հասարակությունում, մասնավորապես հրապարակայնորեն հանդես գալ հանդուրժողականություն սերմանող հայտարարություններով՝ ճանաչելով ԼԳԲՏ անձանց հասարակության լիիրավ անդամներ և քաղաքացիներ լինելու փաստը:

Զանգվածային լրատվության միջոցներին՝

- Դադարեցնել ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն և անհանդուրժողականություն սերմանող հրապարակումները՝ հասարակությանը մատուցելով գրագետ, էթիկապես ընդունելի և ԼԳԲՏ մարդու իրավունքների նկատմամբ հարգանք սերմանող նյութեր:
- Չշահարկել ԼԳԲՏ անձանց առնչվող ցանկացած թեմա՝ զերծ մնալով հասարակության մեջ անհարկի անհանդուրժողականություն և ատելություն սերմանելուց:

Միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին՝

- Պատշաճ կերպով վերահսկել Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած ԼԳԲՏ անձանց իրավունքների վերաբերյալ միջազգային պարտավորությունների կատարման գործընթացը:
- Հանդես գալ պաշտոնական հայտարարություններով՝ ի աջակցումն ՀՀ-ում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության կարևորության և առաջնայնության:
- Մարդու իրավունքներին առնչվող իրենց զեկույցներում անդրադառնալ սույն զեկույցում բարձրացված ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների ձևավորված պրակտիկային:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին՝

- Բարձրացնել հասարակության տեղեկացվածության մակարդակը ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության, և դրանից բխող բացասական հետևանքների մասին, խտրականության բացառման կարևորության և հավասարության սկզբունքների վերաբերյալ:
- Բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը ատելության խոսքի և դրա քարոզչության հակաօրինականության մասին:
- Իրականացնել ջատագովություն Հավասարության մասին արդյունավետ օրենք մշակելու և ընդունելու, ինչպես նաև այլ իրավական փաստաթղթերում ԼԳԲՏ անձանց համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ սահմանելու համար:

Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ

էլ-փոստ՝ info@pinkarmenia.org
հեռախոս՝ +374 60 377277

pinkarmenia.org